ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպես արդեն հաղորդվել է, Լեռնային Ղարաբաղում աշխատանքային ռիթմը խախտվել է ոչ միայն Ստեփանակերտում, այլև ինքնավար մարզի շրջաններում: Մայիսի 15-ին Մարտակերտի շրջանում չէին աշխատում շրջկենտրոնի և Վանք գյուղի արտադրական կոմբինատների, Ղարաբաղի մետաքսի կոմբինատի մասնաճյուղի, խաղողի նախնական մշակման գործարանի, մի շարք ուրիշ հիմնարկությունների կոլեկտիվները:

Մարտունու շրջանում գործադուլ էին անում բնակչության կենցաղային սպասարկման, ավտոտրանսպորտի, գյուղական շինարարության, հասարակական սննդի և այլ ոլորտների աշխատողները: Ասկերանի շրջանում չէին աշխատում շինարարները: Մի քանի դպրոցներում պարապմունքները անցկացվում էին մասնակիորեն: Դրա հետ մեկտեղ վերոհիշյալ երեք շրջաններում գյուղատնտեսական աշխատանքները չէին դադարում:

Ամենուրեք գործում են կենսապահովման ձեռնարկությունները, բուժհիմնարկները:

Մայիսի 15-ին ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Ի. Վոլսկին հանդիպում ունեցավ մարզի կինխորհրդի մի խումբ ներկայացուցիչների հետ, որոնք ստեղծված ճգնաժամային իրավիճակից դուրս գալու իրենց առաջարկություններն արեցին:

Մայիսի 16-ին ԼՂԻՄ-ում մարդիկ դարձյալ դուրս չեն եկել աշխատանքի: Ստեփանակերտում պարապմունքները լրիվ սկսել են դպրոցների 8-րդ և 10-րդ դասարանները: Քաղաքում համեմատաբար հանգիստ իրադրություն է պահպանվում:

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
(Արմենպրեսի սեփ. թղթ.)
Ստեփանակերտ